**ՆԱԽԱԳԻԾ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

-- նոյեմբերի 2026 թվականի №----Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի №517-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոնները հաստատելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №517-Ն որոշման 1-ին կետով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոնների №1 հավելվածի՝ սպառողի էներգատեղակայանքներով էլեկտրական էներգիան ենթասպառողների կամ բաշխողի այլ ցանցերի սնման համար փոխանցելու կարգի՝

   1) 14.1-ին կետի №1 աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Աղյուսակ №1
(առանց ավելացված արժեքի հարկի)

| № | Մեծությունը | Վճարի չափը |
|---|---|---|
| 1. | $a_1$ | 10 337 դրամ/ամիս |
| 2. | $a_2$ | 560 դրամ/ամիս |
| 3. | $a_3$ | 1.038 դրամ/կՎտժ |
| 4. | $a_4$ | 1.859 դրամ/կՎտժ |
| 5. | $a_5$ | 2.090 դրամ/կՎտժ |
| 6. | $a_6$ | 1.002 դրամ/կՎտժ |
| 7. | $a_7$ | 1.777 դրամ/կՎտժ |

».

2) 15-րդ կետի №1 աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Աղյուսակ №1 դրամ/ամիս
(առանց ավելացված արժեքի հարկի)

| № | Սպառողի սպառման համակարգի լարումը | Սպառողի ենթակայանի շահագործման փոխհատուցվող ծախսերի սահմանային մեծությունը | Սպառողի էլեկտրահաղորդման գծերի շահագործման փոխհատուցվող ծախսերի սահմանային մեծությունը |
|---|---|---|---|
| 1. | 6 (10) կՎ | 112 148 | 20 769 |
| 2. | 35 կՎ | 448 588 | 35 307 |
| 3. | 110 կՎ | 897 177 | 37 382 |

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ** **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
-- նոյեմբերի 2026թ.